Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 529 - Ա
որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ամրապնդել Հայաստանում կիբեռանվտանգության ոլորտի զարգացող աշխատուժը և ուղղորդել երիտասարդների մասնագիտական ուղին՝ կիբեռանվտանգության կրթական ծրագրի շարունակման և ընդլայնման միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | 1) Գերմանիայի Դաշնային Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն, Վերդերշեր Մարկտ 1 10117 Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն.<br>2) Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն, քաղաք Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, ՀՎՀՀ՝ 02861356 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Սիմոնյան կրթական հիմնադրամ, քաղաք Երևան, Հալաբյան փողոց 16, ՀՎՀՀ՝ 01245672 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 96,685,800 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետությունում Թումո լաբերի ներկայիս ուսանողները, կիբեռանվտանգության ոլորտում մասնագիտանալ ցանկացող 18 տարին լրացած բոլոր անձինք, իսկ իրազեկման բարձրացման գործողությունների առումով՝ ավելի լայն հանրությունը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2026 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2028 թվականի օգոստոսի 31-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1) Թումո լաբերի ուսանողների համար կիբեռանվտանգության ոլորտում նախագծերի մշակում և անցկացում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2028 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 57,045,000 դրամի չափով.<br>2) Կիբեռանվտանգության ինքնուսուցման ծրագրի բովանդակության ընդլայնում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2028 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 39,640,800 դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1) կիբեռանվտանգության կրթական նախագծերի մշակման և անցկացման, ինչպես նաև ինքնուսուցման ծրագրի բովանդակության ընդլայնման համար փորձագիտական ծառայությունների ձեռքբերում՝ 33,292,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.<br>2) տրանսպորտային և հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում՝ 1,182,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.<br>3) գրենական, գործավարական, տնտեսական նյութերի և պարագաների ձեռքբերում՝ 489,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.<br>4) տպագրական ծառայությունների ձեռքբերում՝ 2,470,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.<br>5) համակարգչային արտոնագրերի ձեռքբերում օտարերկրյա պետություններից՝ 29,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.<br>6) համակարգչային և տեխնիկական սարքավորումների ձեռքբերում Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 10,080,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.<br>7) համակարգչային և տեխնիկական սարքավորումների ձեռքբերում օտարերկրյա պետություններից՝ 11,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.<br>8) ծրագրի մոնիթորինգի և գնահատման ծառայության ձեռքբերում՝ 3,110,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.<br>9) մարքեթինգային և տեսանկարահանման ծառայությունների և գովազդային արշավների ձեռքբերում՝ 912,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.<br>10) հյուրասիրության ծառայության ձեռքբերում՝ 2,700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.<br>11) տարածքի վարձակալություն՝ 1,550,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի: |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1) մարքեթինգային և տեսանկարահանման և գովազդային արշավների ծախսեր՝ 912,000 դրամի չափով.<br>2) հյուրասիրության ծախսեր՝ 2,700,000 դրամի չափով.<br>3) տարածքի վարձակալության ծախսեր՝ 1,550,000 դրամի չափով: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր և միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

19.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ